

Արձանագրություն N6

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի

18.12.2014թ. նիստի

Օրակարգ

1. Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչի ընտրությունը:
2. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 36 անդամներից 29-ը:

1. ԼՍԵՑԻՆ՝ Մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Չուբարյանը, ներկայացնելով Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչի թեկնածու Կ. Կարապետյանի անցած ուղին և գործունեությունը, ավելացրեց, որ Կ. Կարապետյանի թեկնածության վերաբերյալ ամբիոնի և հանձնաժողովի կարծիքները դրական են:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Կ. Կարապետյանի ծրագրային ելույթից հետո հանդես եկան պրոֆեսորներ Ս. Սեֆերյանը, Է. Մինասյանը, Ս. Գասպարյանը, պ.գ.թ., դոց. Ս. Աբրահամյանը: Կարևորվեցին թեկնածուի եռանդը, աշխատասիրությունը, հետևողականությունը, մարդկային բարձր հատկանիշները, գիտական վաստակը և ֆակուլտետի կայացման գործում ունեցած մեծ ավանդը: Ընտրվեց ընտրական հանձնաժողով հետևյալ կազմով՝ Է. Մինասյան /նախագահ/, Մ. Պարսամյան /անդամ/, Մ. Յաղուբյան /ամդամ/:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ընտրության 27 կողմ, 2 անվավեր արդյունքների հիման վրա մ.գ.թ., դոց. Կ. Կարապետյանն ընտրվեց Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչի պաշտոնում:

2. ԼՍԵՑԻՆ՝ Ֆակուլտետի դեկան և գիտխորհրդի նախագահ Ս. Աբրահամյանը հորդորեց գիտխորհրդին ավելի ակտիվ մասնակցություն ցուցաբերել միջազգային մեծածավալ գրանտների ձեռք բերման գործում, ապա շնորհավորեց գալիք Ամանորի կապակցությամբ և մաղթեց աշխատանքային և անձնական հաջողություններ:

Գիտխորհրդի նախագահ՝ Ս. Աբրահամյան

Գիտխորհրդի քարտուղար՝ Գ. Մուրադյան

18 դեկտեմբերի 2014թ.